

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ 4-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵԿԱԾ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Օգոստոսի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց 4-րդ Համահայկական խաղերին մասնակցելու եկած Արգենտինայի պատվիրակությանը՝ գլխավորությամբ ՀՄԸՄ նախագահ պրն Արմանդո Տիրատուրյանի:

Ողջունելով ներկաներին՝ Վեհափառ Հայրապետը կարևորեց համահայկական խաղերի դերը Սփյուռք-Հայրենիք կապի ամրապնդման գործում: Վեհափառ Հայրապետի խոսքերով՝ սա գեղեցիկ մի առիթ է, որպեսզի Սփյուռքի մեր զավակները, Հայրենիք այցելելով, հաղորդ դառնան մեր արժեքներին, ծանոթանան նրա առօրյա խնդիրներին և իրենց նպաստը բերեն Հայրենիքի շենության ու զորացման գործին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Օգոստոսի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց շուրջ 30 սփյուռքահայ ուսուցիչների՝ գլխավորությամբ □Սփյուռք□ գիտաուսումնական կենտրոնի տնօրեն պրն Սուրեն Դանիելյանի:

Պարոն Դանիելյանը հանգամանորեն անդրադարձավ ուսուցիչների աշխատանքներին, առաջադրված նպատակներին՝ մեծապես կարևորելով սփյուռքահայ ուսուցիչների դերը հայապահպանության գործում: Ներկաների անունից նա նաև շնորհավորեց Նորին Սրբությանը ծննդյան 56-ամյա տարեդարձի կապակցությամբ և հայտնեց իրենց ջերմ բարեմաղթանքները:

Օրհնության խոսքով ուսուցիչներին դիմեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայտնելով նրանց իր գնահատանքը՝ ազգին, Հայրենիքին և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն մատուցած իրենց կարևոր ծառայության համար: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց, որ Սփյուռքի ուսուցիչները, Հայաստա-